ԼՐԱՏՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մարտի 30-ին անցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկա էին ընկ. ընկ. Ա. Ս. Դանիելյանը, Ռ. Ե. Սարկիսովը, Ֆ. Տ. Մարգսյանը, Կ. Լ. Գալոյանը, Լ. Ն. Ներսիսյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալներ Յու. Ս. Խոջամիրյանը, Ա. Ս. Սաղոյանը։ Ժողովից առաջ նրանք ծանոթացան ակադեմիայի նախագահության սրահում կազմված ցուցահանդեսին, որտեղ ներկայացված էին ՀՍՍՀ ԳԱ ինստիտուտների և գիտական մյուս հիմնարկների մշակումները։

Ժողովը ներածական խոսքով բացեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը. հաշվետու ժամանակաշրջանը մեր երկրի համար նշանավորվեց կարևոր իրադարձություններով, ասաց նա։ Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ աճեցին ժողովրդական տնտեսության զարգացման տեմպերը, նոր քայլեր կատարվեցին տնտեսության մեջ գիտատեխնիկական առաջադիմության արագացման ուղղությամբ։ ՍՄԿԿ Կենտկոմի 1984 թ. նոյեմբերյան պլենումում Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկ. Կ. Ու. Չեռնենկոն, խոսելով մեծահրատապ խնդիրների մասին, նշեց, որ անհրաժեշտ է երկրի ժողովրդական տնտեսությունը նոր մակարդակի հասցնել ինտենսիվացման և գիտության ու տեխնիկայի նվաճումների արագացված ներդրման միջոցով։ Կուսակցության այս գլխավոր թեզը մեծ պարտավորություն է դնում սովետական գիտության, բնականաբար և մեր հանրապետության գիտական կոլեկտիվի վրա։ Վերջերս կայացած ՍՍՀՄ ԳԱ տարեկան ընդհանուր ժողովում ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ա. Պ. Ալեքսանդրովը, ներածական խոսքում անդրադառնալով մեր երկրում կատարված գիտական ամենակարևոր վաճառումներին, այլոց թվում նշեց, որ Հայաստանում առանձնապես աչքի է ընկնում ֆիզիկայի զարգացումը։ Այո՛, այդ բնագավառում մենք կուտակել ենք բարձր գիտական պոտենցիալ։ Միաժամանակ պետք է ասել, որ այժմ հանրապետությունը ամբողջությամբ և նրա առանձին արդյունաբերությունը անհրաժեշտ չափով դեռ նոր են սկսում միայն զգալ այդ պոտենցիալի ազդեցությունը։ Այդ ասպարեզում մեծ հաջողություններ հասնելու համար անհրաժեշտ է ուժեղացնել ֆիզիկայի գծով երիտասարդ կադրերի պատրաստումը, ընդարձակել հատուկ կոնստրուկտորական բյուրոների և փորձնական արտադրությունների ցանցը, որի դեպքում ֆիզիկան իր հուժկու ներգործությունը կունենա գիտատեխնիկական առաջադիմության վրա։

Այնուհետև Վ. Համբարձումյանը խոսեց ակադեմիայի հիմնարկների ձեռք բերած նվաճումների մասին, արդի պահանջների լույսի ներքո նշեց կոլեկտիվների անելիքները։ Գլխավոր խնդիրներից մեկը գիտության նվաճումների արագ ներդրումն է ժողովրդական տնտեսության մեջ։ Մեծ ուշադրություն նվիրելով գիտական արդյունքների կիրառությունների, ակադեմիան իր հիմնական ուժերը ուղղում է ֆունդամենտալ պրոբլեմների ուսումնասիրությանը։ Նա նշեց, որ տեխնիկական առաջադիմությունը պետք է ընթանա այն ուղիներով, որոնք բացվում են հիմնարար գիտության զարգացման շնորհիվ։ Դրանում անգնահատելի է մաթեմատիկայի, հաշվողական տեխնիկայի, ֆիզիկայի, միկրոկենսաբանության, ժամանակակից գիտության մյուս ուղղությունների դերը։ Գիտնականներին, ամբողջությամբ վերցրած գիտական կոլեկտիվ աշխատանքի արդյունավետությունը, վերջում ասաց Վ. Համբարձումյանը, զգալի չափով որոշվում է յուրաքանչյուրի նախաձեռնությամբ և առաջադրված խնդիրների նկատմամբ նրանց ստեղծագործական մոտեցումով։ Նա համոզմունք հայտնեց, որ հանրապետության գիտությունների ակադեմիայի կոլեկտիվները իրենց աշխատանքը կվերակառուցեն կուսակցության նոր պահանջների ոգով, այն կնպաստակամեն արդի գիտատեխնիկական առաջադիմության պրոբլեմների լուծմանը։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1983 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ակադեմիայի ակադեմիկոս քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Գալոյանը։ Հաշվետու տարին, ասաց նա, հարուստ էր խոշոր իրադարձություններով։ ՍՄԿԿ Կենտկոմի 1983 թ. հունիսյան և

դեկտեմբերյան, 1984 թ. փետրվարյան պլենումներում քննարկվեցին մեր ժողովրդի ու կուսակցության համար կենսական կարևորություն ունեցող հարցեր, որոնց կատարումով է պայմանավորված մեր երկրի սոցիալ-տնտեսական հետագա առաջընթացը։ Այդ պլենումների որոշումները, որոնցում հետագա զարգացում են գտել գիտության և արտադրության ինտեգրացիայի վերաբերյալ ՍՄԿԿ XXVI համագումարի դրույթները, ուղենիշ են մեր գործունեության համար։ ՀՍՍՀ ԳԱ գիտակազմակերպական գործունեության հետագա բարելավման համար կարևոր նշանակություն ունեն այն միջոցառումները, որոնք արտացոլված են գիտահետազոտական աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, արտադրության մեջ գիտության նվաճումների ներդրման գործն արագացնելու, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և կենսատեխնոլոգիայի զարգացման, հանրապետությունում գիտական կադրերի պատրաստման վերաբերյալ ՀԿԿ Կենտկոմի 1983 թ. ընդունած որոշումներում և Հայաստանի կոմկուսի Կենտկոմի պլենումներում, Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Ս. Դեմիրճյանի զեկուցումներում։

Անդրադառնալով ակադեմիայի նախագահության գործունեությանը, զեկուցողը նշեց, որ նրա ուշադրության կենտրոնում մշտապես եղել է ակադեմիայի ինստիտուտներում գիտական հիմնական ուղղությունների հետագա զարգացման խնդիրը։ Նախագահությունը պարբերաբար քննարկել է հանրապետության գիտահետազոտական հիմնարկների և բուհերի գիտական աշխատանքների կոորդինացման և կապերի ամրապնդման հարցերը, կոնկրետ միջոցառումներ իրականացրել ակադեմիական ինստիտուտների գիտական և գիտակազմակերպական աշխատանքը բարելավելու ուղղությամբ։ 1983 թ. ակադեմիայի հիմնարկներում գիտահետազոտական աշխատանք է կատարվել 151 պրոբլեմների գծով, որոնք ընդգրկում են 405 թեմա, այդ թվում՝ բնական գիտությունների գծով 295, հասարակական գիտությունների գծով 109 թեմա։ Ավարտվել է պլանով նախատեսված 62 թեմա։ Այնուհետև Գ. Գալոյանը խոսեց գիտատեխնիկական առաջադիմությունն ապահովելու և գիտության նվաճումները ժողովրդական տնտեսության մեջ ներդնելու գործը արագացնելու, երիտասարդ կադրերի պատրաստման գործում արմատական բեկում մտցնելու, հասարակական գիտությունների հետագա զարգացման անհրաժեշտության մասին։ Հասարակագիտական բոլոր ինստիտուտների համար կարևորագույն նշանակություն ունի ՍՄԿԿ Կենտկոմի վերջերս ընդունած «Զարգացած սոցիալիզմի տնտեսագիտական տեսության հանգուցային հարցերի մշակման գործում ՍՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի դերի բարձրացման մասին» որոշումը։ Զեկուցողը անդրադարձավ նաև ակադեմիայի նախագահության գիտական խորհուրդների գործունեությանը, վերլուծեց արտոնագրային ծառայությունների աշխատանքը, խոսեց այդ ասպարեզում կատարված էական տեղաշարժերի մասին, նշեց այն մեծ ուշադրությունը, որ նվիրվում է գիտական գործողությունների արդյունավետության բարձրացմանը։

Վերջում Գ. Գալոյանն ասաց. հաջողությունները ավելին կլինեին, եթե ակադեմիայի բոլոր օղակներում պատասխանատվության բարձր զգացում հանդես բերվեր որոշումների կատարման գործում։ Նախագահությունը ծրագրել է այս տարի ավելի հաճախ անդրադառնալ ընդունած որոշումների կատարման ընթացքին, նպատակ ունենալով բարձրացնելու ինստիտուտների և գիտական մյուս ստորաբաժանումների ղեկավարների անձնական պատասխանատվությունը։ ՍՄԿԿ Կենտկոմի փետրվարյան (1984 թ.) պլենումում առաջ քաշված լոզունգը, ըստ որի նոր հնգամյակը պետք է դառնա ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի ինտենսիվացման գործում վճռական բեկման հնգամյակ, գիտության աշխատողներին պարտավորեցնում է կատարելագործել աշխատանքի ոճն ու մեթոդները, բացահայտել չօգտագործված ռեզերվները, ապահովել գիտության բոլոր ճյուղերի ինտենսիվ զարգացումը, որպեսզի գիտությունն իրոք դառնա կառավարման մեխանիզմի անբաժանելի մասը։ Ժողովի մասնակիցների անունից Գ. Գալոյանը հավաստիացրեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմին և կառավարությանը, որ ԳԱ նախագահությունը, ակադեմիայի ինստիտուտների կոլեկտիվները իրենց ջանքերը կներդնեն կուսակցության կողմից գիտության առջև դրված խնդիրների կենսագործման համար։

Զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ս. Հ. Վարդանյանը, ՍՍՀՄ ատոմային էներգիայի օգտագործման պետական կոմիտեի նախագահ Ա. Մ. Պետրոսյանցը, Ա. Հ. Գաբրիելյանը, Բ. Ն. Առաքելյանը, Ս. Տ. Երեմյանը, Հայկական ՍՍՀ արտաքին գործերի մինիստր, պատմական գիտությունների դոկտոր Զ. Ս. Կիրակոսյանը, Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Լ. Մ. Զաքարյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր Գ. Ա. Բաղրամյանը։

«Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության էլեկտրիֆիկացման մի քանի պրոբլեմները ՍՍՀՄ պարենային ծրագրի իրականացման լույսի ներքո» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ փոխ-

պրեզիդենտ, հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Ղ. Իոսիֆյանը: Նա խոսեց էկոնոմիկայի և ապրանքարտադրական արտադրության կազմակերպման ընդլայնում, բույսերի, կենդանիների գենետիկայի ու սելեկցիայի, կերի արտադրության, արտադրական պրոցեսների մեքենայացման միջոցների կատարելագործման, նոր տեխնոլոգիայի ստեղծման, հանրապետության հողային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման բնագավառում գիտական աշխատանքներն ուժեղացնելու խնդիրների մասին: Զեկուցողը նշեց գենային ինժեներիայի, վնասատուներից, հիվանդություններից, մոլախոտերից բույսերի պաշտպանության արդյունավետ նոր միջոցների ստեղծման բնագավառում մշակումներն ու հետազոտություններն ընդլայնելու անհրաժեշտությունը, հանգամանորեն խոսեց դաշտավարության և անասնապահության հետագա էլեկտրիֆիկացման ու մեքենայացման և այլ հարցերի մասին:

Տարեկան ընդհանուր ժողովում տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պարգևների հանձնման ամենամյա հանդիսավոր արարողությունը:

Բազմաբեղուն, անխոնջ և հանրօգուտ գործունեության համար «Մեծարման գրի» արժանացավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյանը: Գիտության զարգացման գործում ներդրած մեծ ավանդի համար «Վաստակագրով» պարգևատրվեցին ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամներ Ա. Ա. Թալալյանը, Կ. Ա., Կոստանյանը, Դ. Ի. Տեր-Ստեփանյանը, կենսաբանական գիտությունների դոկտոր Լ. Ա. Մաստիքյանը, պատմական գիտությունների դոկտոր Հ. Գ. Իշխիկյանը, տնտեսական գիտությունների դոկտոր Ն. Ռ. Թովմասյանը, բանասիրական գիտությունների դոկտորներ Ն. Ա. Պառնասյանը, Ա. Գ. Զաքարյանը:

Գիտահետազոտական արդյունավետ գործունեության համար մի մեծ խումբ գիտնականների հանձնվեց «Գովասագիր»:

Տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիայի պրեզիդենտի ընտրություն: Ակադեմիայի պրեզիդենտ ընտրվեց ականավոր գիտնական, սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը:

Հայկական ՍՍՀ ԳԱ Երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար ընտրվեց հանրապետության ԳԱ ակադեմիկոս Ա. Հ. Դսբրիկյանը:

Անցկացվեցին ՀՍՍՀ ԳԱ պատվավոր անդամների ընտրություններ: Պատվավոր անդամներ ընտրվեցին ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, սոցիալիստական աշխատանքի հերոս, ակադեմիկոս Ա. Պ. Ալեքսանդրովը, ՍՍՀՄ ԳԱ փոխ-պրեզիդենտ, սոցիալիստական աշխատանքի հերոս, ակադեմիկոս Պ. Ն. Ֆեդոսեևը, ՍՍՀՄ ԳԱ մաթեմատիկայի բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, ակադեմիկոս Ն. Ն. Բոգոլյուբովը:

ՀՍՍՀ ԳԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 27-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի տարեկան ժողովը: Բաժանմունքի 1983 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Դ. Ա. Բրուտյանը: Նա ասաց, որ բաժանմունքը և նրա հիմնարկները զգալի աշխատանք են կատարել ՍՄԿԿ XXVI և ՀԿԿ XXVII համագումարների, ՍՄԿԿ Կենտկոմի 1983 թ. հունիսյան ու դեկտեմբերյան և 1984 թ. փետրվարյան պլենումների պատմական որոշումների կենսագործման ուղղությամբ: Հաշվի առնելով հասարակագետների առջև դրված նոր խնդիրները՝ բաժանմունքի հիմնարկները վերանայել են գիտահետազոտական աշխատանքների պլանները, դրանք համապատասխանեցրել նոր պահանջներին, ճշգրտել ու կոնկրետացրել գիտական հետազոտությունների ուղղությունները: Ելնելով ՍՄԿԿ Կենտկոմի փետրվարյան (1984 թ.) պլենումում ընկ. Կ. Ու. Չեռնենկոյի զեկուցման դրույթներից, բաժանմունքը մշակել է մի շարք միջոցառումներ, որոնք առաջիկա տարիներին պետք է դրվեն նրա գործունեության հիմքում: Անդրադառնալով ձեռք բերած նվաճումներին, զեկուցողը նշեց, որ զգալիորեն աճել է բաժանմունքի ինստիտուտների մակնիշով հրատարակված գրքերի քանակը (թվով 38 անուն գիրք), դրանց գիտատեսական ու գաղափարաքաղաքական մակարդակը, արդյունավետ են դարձել և կատարելագործվել են գիտահետազոտական պլանների ժամանակին և որակով կատարումն ապահովելու ուղղությամբ տարվող աշխատանքները: Այդ ամենի վկայությունն է այն փաստը, որ բաժանմունքի ինստիտուտներից՝ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը արժանացել է ՀԿԿ Կենտկոմի, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի, ՀԱՄՆ-ի և ՀԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ դրոշին: Այնուհետև Գ.

Բրուտյանը խոսեց գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության, կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման, գիտական աշխատանքների պլանավորման և կազմակերպման ընդգավառներում առկա թերությունների մասին, հատկապես նշեց աշխատանքների պլանավորման և արդյունքների ներդրման գործում գիտական նոր մոտեցում մշակելու անհրաժեշտության կարևորությունը։

Հաշվետու զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Գ. Բ. Ջաճուկյանը, Է. Մ. Ջրբաշյանը, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ս. Ս. Թովմասյանը։ Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը և հանգամանորեն խոսեցին գիտական կադրերի պատրաստման և սերնդափոխության, աշխատանքային կարգապահության, հրատարակչական բազայի բարելավման, գիտական պլանավորման ժամանակ մանրաթեմայնության և բազմաթեմայնության, կոլեկտիվ աշխատանքների հետ կապված հարցերի, ձեռք բերված հաջողությունների մասին։ Մտքերի փոխանակությունն ամփոփեց Գ. Բրուտյանը, որից հետո ընթերցվեց բաժանմունքի ժողովի որոշման նախագիծը։

Ժողովում զեկուցումներով հանդես եկան փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Հ. Աբրահամյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ա. Աբրահամյանը և բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պ. Հ. Հակոբյանը։ Լ. Հ. Աբրահամյանը զեկուցեց «Գիտակցության մարքսյան կոնցեպցիան և արդի գաղափարախոսական պայքարի հրատապ պրոբլեմները» թեմայով։ Ա. Ա. Աբրահամյանը խոսեց կերպավորության բերականական կարգի մասին, իսկ Պ. Հ. Հակոբյանը զեկուցեց «Խաչատուր Աբովյանի կենսագրության անհայտ էջերից» թեմայով։

ՀՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 28-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի 1983 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանը։ Նա ասաց, որ բաժանմունքի գիտական հիմնարկները, ղեկավարվելով ՍՄԿԿ XXVI համագումարի, ՍՄԿԿ Կենտկոմի նոյեմբերյան (1982 թ.), հունիսյան, դեկտեմբերյան (1983 թ.) պլենումների որոշումներով, աշխատանքներ են ծավալել իրականացնելու համագումարի, ՍՄԿԿ Կենտկոմի պլենումների և վերադաս մարմինների կողմից ընդունված որոշումները՝ Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտեսական, գիտական ու մշակութային զարգացման ուղղությամբ։ Կազմվել է Հայկական ՍՍՀ 1986—2005 թթ. գիտատեխնիկական առաջընթացի կոմպլեքս ծրագիրը, որը լայն հավանության է արժանացել և խոշոր նշանակություն ունի մեր հանրապետության հեռանկարային զարգացման համար։ Վերանայվել են ինստիտուտների գիտահետազոտական աշխատանքների պլանները։ ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1983 թ. օգոստոսի 10-ի «Ժողովրդական տնտեսության մեջ գիտատեխնիկական առաջընթացի արագացման միջոցառումների մասին» որոշման լույսի ներքո։ Սովետական ողջ ժողովրդի կյանքում մեծ իրադարձություն էր ՍՄԿԿ Կենտկոմի փետրվարյան (1984 թ.) արտահերթ պլենումը, որը վերստին ցուցադրեց կուսակցության քաղաքականության մարտական ծրագիրը։

Այնուհետև Բ. Առաքելյանը հանգամանորեն անդրադարձավ բաժանմունքի գիտական հիմնարկների գործունեությանը, խոսեց գիտաշխատողների գիտական որակավորման բարձրացման, ասպիրանտուրայի պլանների կատարման, երիտասարդ գիտաշխատողների նկատմամբ հոգատար վերաբերմունք ցույց տալու, գիտնականների արտասահմանյան գործուղումների մասին, գնահատեց գիտության մասսայականացման և գիտական քննադատության ուղղությամբ «Պատմա-բանասիրական հանդեսի» և «Վարար հասարակական գիտությունների» ամսագրի դրական աշխատանքը, նշեց թշնամական պրոպագանդային ըստ արժանվույն հակահարված տալու անհրաժեշտության կարևորությունը, նշեց ձեռք բերված հաջողությունները և անելիքները։

Զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Ա. Առաքելյանը, Ս. Տ. Երեմյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Խ. Սարգսյանը, պատմական գիտությունների դոկտորներ Հ. Հ. Բարսեղյանը, Ռ. Հ. Խաչատրյանը, Վ. Ա. Միքայելյանը, ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների դոկտոր Գ. Բ. Պետրոսյանը։ Նրանք

հավանություն տվեցին հաշվեկռուս զեկուցմանը և խոսեցին դիտության հեղինակությունը բարձրացնելու համար սկզբունքային նշանակություն ունեցող մի շարք հարցերի, կայրերի որակավորման բարձրացման, արտասահմանյան գործուղումների, ավտոմատ-հաշվիչ սարքավորումների ձեռքբերման, պատմության կեղծարարներին հակահարված տալու անհրաժեշտության և այլ հարցերի մասին։ Մարերի փոխանակությունն ամփոփեց Բ. Ն. Առաքելյանը։

Ժողովում զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյանը և պատմական գիտությունների դոկտոր Ն. Հ. Հովհաննիսյանը։ Նրանցից առաջինը զեկուցեց «Տնտեսագիտության խնդիրները «Զարգացած սոցիալիզմի տնտեսագիտական տեսության հանգուցային հարցերի մշակման գործում ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտի դերի բարձրացման մասին» ՍՄԿԿ Կենտկոմի 1984 թ. փետրվարի 7-ի որոշման լույսի ներքո» թեմայով, իսկ երկրորդը՝ «Մերձավորարևելյան կոնֆլիկտի էությունը և առանձնահատկությունները ժամանակակից էտապում» հարցի մասին։